ՔՈՍԻ ՀԵՔԻԱԹԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)

Մի դարբին է ըլլում, մի տղա է ունենում: Էս դարբինը իրան կշտին բանացնելիս է եղել իրան տղեն: Դարբնի ճիկերն էկել է իրան տղի վրա: Ճիկերն որ եկել է, չաքուճը գցել է, որ գլխին տա: Գլխին չի դիպչում, չաքուճը գնում ա ընկնում բոստան: Դարբնի տղեն ճիգվում է նորից բըժնըվում, գնում թաքավորի աղջիկը ուզում:
Էս թագավորի աղջիկը գալիս է, որ տեսնում, որ սա մի քեսիբ տղա է, որ տանը զատ չունի, ասում է.— Ա՛յ տղա, դու որ քեսիբ տղա իր, ես էլ թագավորի աղջիկ, դու ինչի՞ ինձ հ՝ուզեցիր:
Ասում է.— Դե ես ի՞նչ անեմ, աստծու հրամանն էր: Ես գիշեր երազումս քեզ տեսա, որ հ՝ուզեցի:
Էն աղջիկն ասում է.— Ա՛ տուն շինվի, ես էլ երազում տեսա, որ իրար ուզում ինք:
Դա ասում է.— Էսենց է, աստծու կամքն է: Աստծու կամքով կարող ենք ապրել:
Ասում է թագավորի աղջիկը.— Ա՛յ տղա, քու հերդ էն չաքուճը, որ վրա արավ քու գլխիդ որ դիպչի, չի դիպավ, դուս բոստան վեր ընկավ, էն չաքուճը գնա բեր, էդ չաքուճը տար, դու դրա գինը չես գիտենալ, բազարում դարբիններ գիտենան, որ նա ինչ կարժե, կըտանես նրանց վրա կծախես:
Էն տղեն տանում է չաքուճը բազար, տալի վեց ապասու, մի ապասուն հաց առնում, մի ապասուն էլ չայ ու շաքար առնում, բերում է իրան տուն, իրան ընտանիքի մորը: Էդ կնիկը մի խալիչա է գործում, էս տղին ասում է.— Ա՛յ տղա, դու էդ խալիչեն տար բազարի մեջը ծախի, ըմմա ինչ անես, քոսա մարդու չտաս:
Էս տղեն լսում է ու էդ խալիչեն վեր ունում ու տանում, տանում է բազարի մեջը ծախսը հանում, տեսնում է էն տեղաց մի մարդը ձեն ածում, թե.— Այ տղա՛, էդ խալիչու գինը ի՞նչ ա:
Էդ տղեն էլ ասում է.— Քսան թուման է:
Դա ասում է.— Ինձ վրա բի ծախի, ես քառասունհինգ թուման կտամ:
Դա էլ ասում է.— Լավ կլի, կծախեմ:
Ժում մտիկ է տալիս, տեսնում է, որ քոսա է:
Ասում է.— Չէ՛, քեզ վրա չեմ ծախիլ:
Քասեն տեսնում է, որ էդ տղեն խրատով է, քոսի վրեն չի ծախիլիս, գնում է էն կողմի վրա:
Քոսեն գնում է իրան երեսի վրեն միրուք սարքում, դառնում ուրիշ կողմով, փաթ տալիս, գալում է բազար տղի առաջ:
Ասում է.— Տղա՛, էդ խալիչեն ինձ ծախի:
Տղան ասում է.— Կծախեմ:
— Գինն ի՞նչ է:
— Քառասունհինգ թուման:
Տալիս, առնում է մեր Քոսեն ու տղին տանում իրա տուն, պատիվ անում, որ խալիչեն իր վրա ծախեց, լավ պատիվ կանե և թե փող կուտա Քոսեն էդ տղին:
Տղեն վեր է ըլլում, առնում փող, գնում իր տուն, իր կնկա կուշտ:
Կնիկն ասում է.— Ա՛յ տղա, խալիչեն ո՞ւմ վրա ծախեցիր:
Տղեն ասում է.— Քոսե մը էկավ չտվի, մե մորուքավոր մարդու վրա ծախեցի, կնիկն հասկանում է, որ Քոսին է ծախել:
Ասում է.— Ա՛յ տղա, Քոսին էս տվել:
Տղեն ասում է, թե.— Չէ՛, մի միրուքավոր մարդու տվի:

Կինն ասում է.— Ա՜ տղա, դու գիտես, խեղճ ու մեղք քու շըլինքին, հետո մենք դրանից վնասվել դենք, բայց ես ասի, որ Քոսի վրա չծախես։
Տղեն ասելիս է, թե.— Ես մորուսավոր մարդու մը տվի, նա ինձ տարավ իր տուն, լավ պատվեց, պետք ա ես էլ կանչեմ իմ տուն պատվեմ նրան։
Փողը վեր էնում, գնում բազար, որ մսեղեն, այնոյին առնու, բերե իր տուն։ Բերում է իրան տուն, կնիկը կերակուր է պատրաստում էդ տղին։
էդ կնիկը ժումը ասում է.— Ա՜յ տղա, Քոսին չասես՝ իմ կնիկը էստեղ է. ասե՝ հերանց տանն է։
Ու ելնում մտնում ամբարի մեջ։
Էս Քոսեն գալիս է, ու հետը բանկի գինի, այսինքն՝ քարթու գինի։ Դրանք, որ սկսում են հաց ուտելու, Քոսեն սուտ բանկի գինուց լեցում է, իրա մորուքով վեր ածում, կեվա թե՝ խմեցի։ Տղեն գիտում է, թե Քոսեն թամուզ խմեց գինին։ Ժում դառնում ածում է, տալիս տղին։
Ասում է.— Հիմի էլ դու խմի մի բաժակ։
Խմում է տղեն բանկի հընկնում, մեռելի նման քնում է։ Երբ տղեն քնում է, Քոսեն վեր կենում, սկսում սրա տան մեջ ման գալ։ Ման ա գալի, տեսնում, որ սրա տան ամբարի մեջը, հրե՛ս, կնիկ հոն է, բռնում է էդ կնկան ու դուս բերում, վերնում տանում իրան տունը։ Հիմի դրան թողենք ուր տեղը, էս տղից ասենք։
Էս տղեն զարթնում է, որ իրան տանը ոչ Քոսա կա, ոչ կնիկ կա։
Ասում է.— Ա՜խ աստոծ ջան, էս ի՞նչ օղբաթ էկավ իմ գլուխս։ Թենց ասում է ու ինքը զոլում ման գալու իրա կնկանը։ Դա գնում է ու մի պառավ մարդի ռաստ ա գալի։
Էն պառավ մարդը ասում է.— Ա՜յ տղա, դու ի՞նչ մարդ ես։
Ասում է.— Պա՛, էս իմ կնիկը մի խալիչա գործեց, ես տարա բազարումը մի քոսի վրա ծախեցի, էդ Քոսեն էկավ իմ տունս, իմ գլուխս օղբաթ բերուց, ժում իմ կնիկս տարավ, հիմա ես ելեր եմ հընկեր ման գամ, որ գտնեմ։
Էս մարդն ասում է.— Ա՜յ տղա, դու թենց ման գալով չես կարողանալ գտնել։
էդ տղեն ասում է.— Պա՞, պիձա ջան, ինչպե՞ս կգտնեմ։
Նե լե ասում է.— Ա՜յ տղա, դու գնա մը քիչ կանֆետ, թել, ասեղ, մանտրուք առ, ածա մի խուրճընի մեջ, հընկի հայաթները, ասա. «Ա՜յ մանտրուք առնող, մանտրուք ո՞ւմ հարկավոր է»։ Թենց կգտնես։
Տղեն լսում է պիձուն, ժում գնում ա, առնում ա մանտրուք, ածում ա իրան խուրջին, սկսում տունե տուն ման գալը։ Ղի ա տալի, թե. «Ա՜յ մանտրուք, ո՞ւմ Է հարկավոր»։
Ընդուր կնիկը իմանում է, իրանց քոծերին ասում է.— Գնացեք, էն մանտրուք ծախողին կանչեցեք գա ըստի։
Դրանք՝ էդ քոծերը, գնում են, կանչում են, բերում են կնգան կուշտը։
Կնիկն ասում է, որ.— Ա՜յ տղա, ի՞նչ ես ծախում։
Նե լե ասում է.— Խանո՛ւմ, մանտրուք եմ ծախում։
Խանում ասում է.— Ի՞նչ մանտրուք է, բաց արա խուրճին, որ տեսնեմ։
Բաց անում է խուրճին տղան, ասում է. «Կանֆետ, ասեղ, թել բան է»։
Դա էդ խանումը կանֆետը առնում է տալի իրան քոծերին ու դուս ըղարկում։ Դառնում է էն տղին, ասում է.— Ա՜յ տղա, ինձ կճանաչե՞ս։
Նե լե ասում է.— Խանում, չէ, չըմ ճանաչեր։
Խանումն ասում է.— Չէ ես քու կնիկն եմ, որ ես ասեի՝ Քոսեն մեր գլուխը օղպաթ պտի բերիլ, հիմա դու գնա դրսերում, բազարում պտտե, իրեք օրեն եդ կգաս։
Հըմի խապարը որտեղի՞ց տանք՝ Քոսիցը։

Քոսեն կգա տունը, էդ կնիկը կասի.— Դու գնա ֆլան ճամբումը հըրամբաշիք կան։ Նրանք ճոթ են բերում պարխանով, դեվով, դու նրանց առաջը կտրիր, թալանի ու բեր։
Էս Քոսեն լսում է ու գնում։
Էդ Քոսին թողունք էդ տեղ կենա։
Էս կնիկն ինքն իրան քոծերին ասում է.— Ես մի զապիսկա կգրեմ, դուք տարեք տվեք բազարում մի ջհուդ կա, տվեք նրան։
Էդ քոծերը վեր են ելնում ու տանում էդ զապիսկեն։ Տանում են ջհդին տալի։ Ջհուդ կարդում է, տեսնում է, որ էս կնիկը քարթու գինի է ուզել, ջհուդը մի պուճուր շուշեն լքցնում է, տալի քոծին, էս քոծը տանում է տալի խանումին։
Խանումն ասում է.— Դե՛հ, սամավարը գցեցեք, հըրես Քոսեն կգա, օր չայն հազըր ըլլի, խմի։
Էս քոծերը սամավարը պատրաստում են, ըրիկունը տեսնում են Քոսեն եկավ դեվենին բառցած։ Ճոթը բերուց. ճոթը վեր են բերում դեվենուցը, բերում են տունը։
Ասում է թե.— Չայ շինեցեք, բերեք խմեմ։
Էդ կնիկն ասում է.— Նստի, էս ռոպեին չայ պատրաստեմ։
Էդ կնիկը գնում է ժում էդ քարթու գինուցը բերում չայու հետ խառնում։ Էդ Քոսեն խմում է։ Խմում է թե չէ, քնում է, հընկնում է բանկի։
Թագավորի փեսեն եկել է, Քոսի պատի տուկին նստել է, որ իր կնիկը գնտ, վերու իրան գա։ Էս խանումը գնում ա, որ տեսնում ա հրես իրան մարդը պատի տակին քնած, էլ ղիմիշում չի վե կացնի, ինքն էլ կշտին նստում ա։ Դա մեկ էլ տեսնում ա, որ հրես գետինը պատռեց, հուշապների գլխավորը՝ հարամի բաշին դուս էկավ ու էս հարսին բռնեց տարավ գետնի տակով։ Տղեն մնաց պատի տակին քնած։
Խանումը գնում է տեսնում, որ սրանք ինն հոգի են։ Էս հուշապների մինն ասում է.— Ես պետք է հուզեմ։ Մեկն ասում է՝ ես։
Իսն կնիկն ասում է, թե.— Որդ ղոչաղ էք, գնացեք էն Քոսի անկաջնին կտրատեցեք բերեք։
Դրանցից մեկը վեր է կենում ու գնում, գնում Քոսի անկաջները կտրատում բերում։
Էդ հուշապին կնիկն ասում է.— Ա՛յ, տեսար դու ղոչաղ էս, սև էս, նրա համար ղոչաղ էս։
Սև դևն էր։
Էդ կնիկն սկսում է ըդտեղ կերակուրներ պատրաստել։ Էդ սև հուշապին ասում է.— Դու ըստեղ կաց իմ կշտին, ես քեզ պտել հուզեմ։
Ըմմա մտքում խաբում է։ Էդ հուշապը ուրախանում ա։ Էն մեկէլ ութ հուշապն գնացած են թալան անելու։ Էս կնիկը կերակուրնին պատրաստում է. Էդ քարթու գինուցը ածում է կերակուրի վրա։ Հրիկունը հուշապնին գալիս են, ճրագնին վառում են, տեսնում են, որ ճրագ, կրակ վառած, կերակուրնին պատրաստի։ Ուրախանում են, կնիկն սկսում է կերակուրնին բաժին անել։
Էդ ութ հուշապնին ասում է.— Նստեցե՛ք։ Ըման էն Սև հուշապին, որ ասեր է թե. «Ես քեզ կառնեմ». ասեր է. «Դու լե ղուլուղ արա դրանց»։ Էդ հուշապնին կերակուրնին ուտում են ու բանկ են հընկնում, քնում։
Էդ կնիկը ասում է էն Սև հուշապին, թե.— Դու թուրը վե կալ, էդ կոնուց դրանց կտորելով մի զբաղից արի։
Սև հուշապը սկսում է դրանց կտորիլը։ Ասում է, կտորում է դրանց ութին էլ վերջացնում է, մնում են էդ կնիկն ու Սև հուշապը։ Էդ հուշապին էդ կնիկը ասում է.— Էսա մնացինք մենք, պիմ,— ասում է,— ես քեզ կուզեմ, պիմ էլ դու ինձ ուզա։
Էս հուշապը ասում է.— Դեհ արի իմ կշտին, գլուխդ հետս մին արա։

Էդ կնիկն էլ ասում է.— Ես էդա քունն եմ, դուն էլ իմս էս, ըտավար բան չի կարելի, որ իմ գլուխս հետըդ մին անեմ, չուելը մենք լիս աշխարհը չգնանք։
Հուշապն ասում է.— Որ գնանք լիս աշխարհը, էնտով գլուխըդ հետս մին կանե՞ս։
Էն կնիկն էլ ասում է.— Բա՛, հարկ է։
Ասում է Հուշապը.— Երբոր թենը է, մենք խազինա շատ ունենք։
Էլ կնիկն էլ ասում է.— Երբոր խազինա ունենք, հետներնուս տանենք, որ մեզ համար տներ բան կշինենք, կկառավարվենք։
Ասում է հուշապը.— Լավ էս ասում, գնանք խազինեն տանենք։
Էն կնիկն ասում է թե.— Ինչո՞վ տանենք։
Նե էլ ասում է.— Մենք մի սև ձի ունենք, էն ձիուն կբարձենք, նե կբերի։
Բերում են սև ձին, բարձում են խազինեն, հընկնում է հուշապը հաղագ դնում, որ դունչը բաց է անում ճամբա ելնում են լուս աշխարհ։ Էն կնիկն էլ էն ձիուն նստած ըլլում, հուշապն էլ ուրիշ՝ ձիու նստած էր։
Էդ հուշապը էդ կնկանը ասում է.— Դու առաջին գնա։
Էդ կնիկն էլ ասում ա.— Չէ, դուն գնա առաջ։
Հուշապն սկսում է առաջին գնալ, էդ կնիկը թուր ա հանում, վրա բերում, հուշապի գլուխը սըզբըվում ա, յուշապ վեր ընկնում սատկած։ Մնում է մենակ էդ կնիկը, մեկ էլ էն Սև ձին ու խազինեն։
Էս կնիկն ասում է.— Ի՞նչ անեմ, խոմ էս խազինեն էստեղ թողնելու չեմ, պետք է տանեմ հետս։
Վերում է, ձին տանում, գնում ա։ Գնում ա տեսնում, որ հրես իրան մարդը, էն Քոսի պատի տակը դեռ նսաած է։
Ասում է.—Հե՛յ վա՛յ, հե՛յ վա՛յ. ես քեզ. որ ասեի, թէ քոսի վրա խալիչեն չծախես, մեր գլուխ օղպաթ պտի բերիլ։
Էն մարդն էլ ասում է.— Ես ի՞նչ գիտեի, որ քոսա է, ես միրուքավոր մարդի վրա ծախեցի, ես ի՞նչ գիտնայի քոսա է ու այդպես արի։
Թագավորի աղջիկը ասում է.— Աստծու փառքը, ա՛յ մարդ, որ մենք էսքան չարչարեցինք, ըժում հետ դուրս էկանք։ Հիմա էլ մի վախենալ, արի էս ձին բռնի, այդ բեռը խազինա է, մենք չել մեր մահի օրը ուտենք չի հատնիլ։
Ասում է.— Դե՛հ, գնանք,— էն մարդը։
Թագավորի աղջիկը ասում է.— Վե՞րտեղ գնանք։
Տղեն ասում է.— Կերթանք մեր տունը։
Կնիկն ասում է.— Չէ, պետք է չի գնանք։ Քանի որ Քոսեն էկել է էնտեղ, էլ էն տունը մենք չկենանք։
Տղեն ասում է.— Պա՛, որդի գնանք։
Թագավորի աղջիկն ասում է.— Տունը շինած, պա էդքան էլ չգիտե՛ս, որ քեզ էն պառավ մարդը իմ տեղը նշանց էր տվել, ասած էր «կոնֆետ, մանտրուք կառնես, ըժում էդ մանտրուքով քու կնիկդ կգտնես»։ Ա՛յ քու տունդ, քու հերդ էլ էն պառավ մարդն է։ Պետք է մենք գնանք նրա տունը։
Սրանք ասում են ու վե կենում ու գնում։ Գնում են էն պառավ մարդի տունը։
Էն պառավ մարդն ասում ա.— Բարի՛, հազար բարի էք էկել։
Դա շատ ուրախանում է։
Էդ պառավ մարդն ասում է.— Ա՛յ տղա, դու քու տունը գնալ էս հուզո՞ւմ, թե՞ չէ։

Էն տղեն էլ ասում է.— Իմ տունս էս է, որ դուն ինձ բարի խրատ տվիր։ Եթե դուն չէր էլլել, ես էլ պեթարապ կլեի, հըմա ես քեզանից շատ շնորհակալ եմ, դու ինձ համար և իմ ընտանիքի համար կլես ծնող, մենք էլ քեզ հարազատ որդիք կլենք։
Որ էդ տղեն սկսում է թենց ասել, էս պառավ մարդի սիրտը շատ ուրախանում ա, ասում ա.— Որդի՛, եբոր դուք ինձ ընդունում էք, ինձ որդի դառնում եք, ձեր փալի աստծուն եք ընդունում,— ասում է,— ես ձեզ նորից օխտն օր, օխտ քշեր պետք ա հարսանիք անեմ։
Էս տղեն և թագավորի աղջիկը ասում են.— Հայրիկ ջան, շատ լավ ես ասում, բայց տուն չի ունենք, պետք ա տուն շինենք, նորից մեզ, քու կամքովդ, ոնց որ գիտես քու խելքի կտրածը, հընենց մեզ հրսանիք կանես։
Էս պառավ մարդը ասում ա.— Ա՛յ որդիք, շատ լավ էք ասում, ըսկսենք տները պատրաստել, ըժում հարսանիք կանենք։
Դրանք սկսում են էդ տների պլանին, վերցնում տալի փոդրատչու, ինճիների։
Ասում են.— Էն տեսակ հայաթները կշինեք, որ մեր տունը թագավորի տանը շվաք անի։
Դրանք սկսում են թենց։ Դրանց հավան կացած տները շինում են, ըժումը գնում են նորից հավաքվում էդ թաժա տների մնջը, սկսում են դրանք էդ տեղ օխտն օր, օխը գիշեր զուռնա դըհոլ ածում, սազանդարները բերում, դրանք քեֆ են անում ու հըրսանիք։
Էդ պառավ մարդը դրան ասում ա.— Ա՛յ որդի, օրեց օխտը ես քու հայրդ, դուք էլ իմ որդիքս տի ըլլիք։ Հիմա, որ դուք էկաք իմ կուշտս իմ ծերության ժըմանակս, դուք տիր[1] պիտ ըլլեք, դուք իմ աչքիս շատ էք դուր էկում։ Աստծու աչքին էլ դուր կուգաք, ու իր քաղցր աչք ձեր վրա է միշտ։
Նրանք հասան իրանց մուրազին, մենք էլ հասնենք մեր մուրազին։

[1] Տեր-Ծ. Բ.։